# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի<br>տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 5 | ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. մարտի 7-ի N 31-Ն հրամանով հաստատված Կարճաթև կիսաբամբակյա գործվածքով շապիկ (Ձև 7-ը կցվում է): Գույնը՝ մոխրագույնի և սևի համադրություն, սևը կազմում է շապիկի բարձրության 3/5-րդ մասը, մոխրագույնը՝ 2/5-րդ մասը: Բաղադրությունը՝ նվազագույնը 50% բամբակյա թելից, առավելագույնը 50% ակրիլ թելից: Քաշը 1մ2 համար ոչ պակաս, քան 180 գրամ ±2%: Ձախ թևին եզրագծից 3սմ-ից հետ կարվում է ասեղնագործված Հարկադիր կատարումն ապահովող ծառայության թևքանշանը, աջ թևին կարվում է ասեղնագործված Հայաստանի Հանրապետության քարտեզը՝ համապատասխան մարզի սահմաններով ընդգծված, թևերը ավարտվում են ծալվածքով, թևերի եզրից գործված է 3սմ հաստության սև գույնի գիծ, որի ստորին հատվածի գործվածքից 10մմ հաստությամբ անցնում է մոխրագույն 10մմ գործվածքով գիծ՝ հանովի ուսանշաններով: Աջ կրծքավանդակին կարվում է ասեղնագործված «ՀԿԱԾ» գրվածքով կրծքանշան: Ձախ կրծքավանդակին կարվում է ասեղնագործված համապատասխան ծառայողի անուն ազգանունը: Օձիքը՝ ծալովի. կրծքամասում՝ 3 կոճակ, օձիքի բարձրությունը ծալված վիճակում 3.5սմ, որից 15 մմ-ը մոխրագույն եզրագիծ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 5 | |